ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 26 հուլիսի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 39-Ա

**ՀԱՄԼԵՏ ԱՄԲԱԿՈՒՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 12-րդ կետերը, հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Համլետ Ամբակումի Գևորգյանի՝ գիտության ոլորտում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումներն ու ակնառու նվաճումները և արգասաբեր աշխատանքը, ինչպես նաև՝ գիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ավանդը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Համլետ Ամբակումի Գևորգյանին ծննդյան 90-ամյա հոբելյանի կապակցությամբ շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի Ոսկե մեդալ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ